ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«28» հոկտեմբերի 2016 թվականի № 119-Ն

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով հիմք ընդունելով՝ <Մ.Լ. մայնինգ> ՍՊ ընկերության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 15 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Մ.Լ. Մայնինգ> ՍՊ ընկերության՝ ՀՀ Կոտայքի մարզի Կարապիծորի լիթոիդային պեմզայի հանքավայրի երկրորդ տեղամասից արդյունահանում կատարելու համար, 2015 թվականի ապրիլի 20-ին տրամադրված թիվ ՇԱԹ-29/522 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 18 տարով, սահմանելով մինչև՝ 2058 թվականի ապրիլի 20-ը:

2) ՀՀ Կոտայքի մարզի Կարապիծորի լիթոիդային պեմզայի հանքավայրի 01.01.2016թ դրությամբ, 718.49 հազար մ^3 մնացորդային պաշար ունեցող՝ 1.X=4470838 Y=8470280, 2.X=4470887 Y=8470042, 3. X=4470923 Y=8469979, 4.X=4470969 Y=8469962, 5. X=4471029 Y=8469981, 6.X=4471117 Y=8470123, 7.X=4471105 Y=8470243, 8.X=4471073 Y=8470280, 9.X=4470968 Y=8470306, 10.X=4470890 Y=8470303> կոորդինատներով եզրագծված երկրորդ տեղամասն ընդլայնել՝ 1,X=4469228 Y=8468658, 2,X=4469229 Y=8468650, 3,X=4469300 Y=8468586, 4,X=4469352 Y=8468534, 5,X=4469375 Y=8468529, 6,X=4469402 Y=8468534, 7,X=4469439 Y=8468554, 8,X=4469542 Y=8468628, 9,X=4469562 Y=8468652, 10,X=4469573 Y=8468688, 11,X=4469570 Y=8468722, 12,X=4469551 Y=8468746, 13,X=4469525 Y=8468758, 14,X=4469465 Y=8468757, 15,X=4469387 Y=8468767, 16,X=4469323 Y=8468786, 17,X=4469313 Y=8468785, 18,X=4469287 Y=8468757, 19,X=4469237 Y=8468676 կոորդինատներով եզրագծված 710,0 հազար մ^3 պաշար ունեցող առաջին տեղամասով, ընդհանուրը տրամադրել՝ օգտակար հանածոյի՝ 1428.49 հազար մ^3 լիթոիդային պեմզայի պաշար.

4) հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել, մինչև՝ 2040թ-ը 46.03 հազար մ^3 , սկսած՝ 2041թ-ից 17.0 հազար մ^3 մարվող պաշար.

2. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-522 պայմանագրում, լեռնահատկացման L-522 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ